**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**
**ПРОТОКОЛ № 2**
**Заседание оценочной комиссии процедуры закупки под кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75»**

Նիստի անցկացման վայրը՝
Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 123 սենյակ, օրը՝ 10.03.2026 թ. - ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաբլումյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ք. Ստեփանյան, Գ. Նախշքարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Աղաբալյան

Участвовали
Председатель комиссии: А. Баблумян
Члены комисии: К. Степанян, Г. Нахшкарян
Секретарь комисии: А. Агабалян

**1. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում տրված հարցադրումների և դրանց վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու մասին**
**1. О вопросах и предоставлении по ним разъяснений в рамках процедуры закупки с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75»**

---

Ա. Բաբլումյան, А. Баблумян

**Հարցադրում 1**

Հարգելի պատվիրատու, Վերջին ժամանակահատվածում Ձեր կողմից հայտարարվող մրցույթներում նկատվում է կոնկրետ խանութ-սրահի ուղղվածություն: Մասնավորապես, տեխնիկական բնութագրերում պարբերաբար կրկնվում են նույն ապրանքատեսակի բրենդները, ինչը կարող է ստեղծել տպավորություն, որ առկա է պայմանավորվածություն կոնկրետ մատակարարի կամ խանութի հետ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ցանկանում ենք նշել, որ նման մոտեցումը կարող է սահմանափակել մրցակցությունը և հակասել գնումների գործընթացի թափանցիկության և հավասար պայմանների սկզբունքներին: Նշենք նաև, որ վերջին ժամանակահատվածում մրցույթների տեխնիկական պահանջներում հիմնականում նշվում են այնպիսի բրենդներ, որոնք ներկայացված են «Վեստա» ընկերության կողմից, և նույն ընկերությունն էլ հանդիսանում է մատակարար: Ստեղծված իրավիճակը առաջացնում է կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ մտահոգություն և անհանգստություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից հայտարարված մրցույթների վերաբերյալ դիմել ենք գնումների վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմիններին՝ խնդրելով ուսումնասիրել գործընթացը և ապահովել արդար ու թափանցիկ մրցութային պայմաններ: Տեղեկացնում ենք նաև, որ տվյալ գրությունը ուղարկվել է համապատասխան ստորաբաժանումներին, և չի բացառվում հարցի ներկայացումը նաև ՀՀ վարչապետի աշխատակազմին՝ խնդրելով ուսումնասիրել հնարավոր ռիսկերը: Հուսով ենք, որ հետագայում

մրցույթների տեխնիկական պահանջները կձևակերպվեն չեզոք և մրցակցային սկզբունքներով՝ ապահովելով հավասար պայմաններ բոլոր մասնակիցների համար և բացառելով կոռուպցիոն ռիսկերի առաջացումը:

**Вопрос 1**

Уважаемый заказчик, В последнее время в конкурсах, объявляемых с Вашей стороны, наблюдается направленность на конкретный магазин-салон. В частности, в технических характеристиках регулярно повторяются бренды одних и тех же товаров, что может создавать впечатление о наличии договоренности с конкретным поставщиком или магазином. Учитывая вышеизложенное, хотим отметить, что подобный подход может ограничивать конкуренцию и противоречить принципам прозрачности и равных условий в процессе закупок. Также отметим, что в последнее время в технических требованиях конкурсов в основном указываются такие бренды, которые представлены компанией «Веста», и именно эта компания выступает в качестве поставщика. Сложившаяся ситуация вызывает обеспокоенность и тревогу в отношении возможных коррупционных рисков. Учитывая вышеизложенное, сообщаем, что по поводу объявленных Вами конкурсов мы обратились в соответствующие органы, осуществляющие контроль в сфере закупок, с просьбой изучить данный процесс и обеспечить справедливые и прозрачные конкурсные условия. Также информируем, что данное письмо направлено в соответствующие подразделения, и не исключается возможность представления вопроса также в Аппарат Премьер-министра Республики Армения с просьбой изучить возможные риски.

**Հարցադրում 2**

Հարգելի պատվիրատու, Ուսումնասիրելով Ձեր կողմից հայտարարված գնման ընթացակարգը՝ նկատում ենք, որ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններում կահույքի տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ համապատասխանում են «Վեստա» խանութի ներկայացված ապրանքատեսակներին: Մրցույթը ձևակերպված է կոնկրետ մատակարարի ապրանքին համապատասխանեցված, ինչի արդյունքում սահմանափակվում է այլ տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը: Եթե տվյալ ապրանքատեսակը փաստացի առկա է միայն մեկ խանութում, ապա անհասկանալի է, թե ինչու է հայտարարվում մրցույթ, երբ օրենքը թույլ է տալիս գնման գործընթացը կազմակերպել մեկ անձից գնման ձևով:Ստացվում է պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցը հնարավոր պայմանավորվածություն ունի կոնկրետ խանութի հետ, որի արդյունքում տեխնիկական բնութագրերը տրամադրվել են տվյալ խանութի կողմից և հրապարակվել նույն տեսքով:

**Вопрос 2**

Уважаемый заказчик, Изучив объявленную Вами процедуру закупки, отмечаем, что в лотах № 5, 6, 7 и 8 технические характеристики мебели полностью соответствуют товарам, представленным магазином «Веста». Конкурс сформулирован таким образом, что он фактически соответствует продукции конкретного поставщика, в результате чего ограничивается участие других хозяйствующих субъектов. Если данный вид товара фактически представлен только в одном магазине, то возникает вопрос, по какой причине объявляется конкурс, тогда как законодательство допускает организацию закупочного процесса способом закупки у одного лица. Таким образом, создаётся впечатление, что сотрудник ответственного подразделения может иметь определённую договорённость с конкретным магазином, в результате чего технические характеристики были предоставлены данным магазином и опубликованы в том же виде.

**Պարզաբանում**

Հարգելի՛ գործընկեր, ի պատասխան Ձեր կողմից ներկայացված հարցմանը, հայտնում ենք, որ ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված են համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22 կետի:

**Разяснение**

Уважаемый коллега, в ответ на представленный Вами запрос сообщаем, что технические характеристики товаров составлены в соответствии с пунктом 22 Порядка «Организация процесса закупок», утвержденного Постановлением Правительства Республики Армения № 526-Н от 4 мая 2017 года.

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:
Принято решение: за-3, против-0.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝<br>Председатель комиссии: | | Ա. Բաբլումյան<br>А. Баблумян |
| Անդամներ՝<br>Члены комисии: | | Ք. Ստեփանյան<br>К. Степанян |
| | | Գ. Նախշքարյան<br>Г. Нахшкарян |
| Համակարգող՝<br>Секретарь комисии: | | Հ. Աղաբալյան<br>А. Агабалян |